ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» նոյեմբերի 2014թ. N 807-Ն

ք.Ստեփանակերտ

ՎՏԱՆԳԻ ԱՂԲՅՈՒՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԿԵՏԵՐԻ ՀՍԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ՝ ԸՍՏ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 414 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

,Իրավական ակտերի մասինե Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին և ,Սննդամթերքի անվտանգության մասինե Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 7-րդ մասին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել վտանգի աղբյուրի վերլուծության և կրիտիկական կետերի հսկման համակարգի ներդրման ժամանակացույցը՝ ըստ արտադրության ոլորտների՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) սույն որոշման 1-ին կետով սահմանված վտանգի աղբյուրի վերլուծության և կրիտիկական կետերի հսկման համակարգի ներդրման ժամանակացույցի դրույթները տարածվում են սննդի շղթայի փուլերում ներգրավված 10-ից ավելի աշխատողներ ունեցող տնտեսավարող սուբյեկտների վրա.

2) 2020 թվականի հունվարի 1-ից վտանգի աղբյուրի վերլուծության և կրիտիկական կետերի հսկման համակարգի ներդրումն ավարտելու պահանջը տարածվում է նաև սննդի շղթայի փուլերում ներգրավված 5 և ավելի աշխատողներ ունեցող տնտեսվարող սուբյեկտների վրա:

3.Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը՝ սննդամթերքի անվտանգության ոլորտում պետական վերահսկողություն իրականացնել և մասնագիտական աջակցություն ցուցաբերել սույն որոշման իրագործման համար:

4.Սննդամթերքի այն արտադրությունների, առևտրի և ծառայությունների ոլորտները, որոնք ներառված չեն սույն որոշման հավելվածի ցանկում, ժամանակացույցի կիրառման վերջնաժամկետ է սահմանվում արտադրությունը, առևտուրը և ծառայությունների մատուցումը սկսելուց հետո 2 տարին լրանալը:

5.Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 10-ի ,Վտանգի աղբյուրի վերլուծության և կրիտիկական կետերի հսկման համակարգի ներդրման ժամանակացույցը՝ ըստ արտադրության ոլորտների սահմանելու մասինե N 414 որոշումը:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2014 թվականի նոյեմբերի 28-ի
N 807 -Ն որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Ց Ց
ՎՏԱՆԳԻ ԱՂԲՅՈՒՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԿԵՏԵՐԻ ՀՍԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ՝ ԸՍՏ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ

NN ը/կ	Տնտեսական գործունեության տեսակի ծածկագիրն ըստ ՏԳՏԴ-ի	Տնտեսական գործունեության տեսակը	ժամկետները
1	2	3	4
1.	15.1	Մսի և մսամթերքի արտադրություն	մինչև 2017 թվականի հունվարի 1-ը
	15.5	Կաթնամթերքի արտադրություն	
	15.32	Մրգահյութերի, բանջարահյութերի արտադրություն	
	15.81	Հացի և թարմ հրուշակեղենի արտադրություն	
	15.82	Պաքսիմատների, թխվածքաբլիթների և երկարատև պահվող հրուշակեղենի արտադրություն	
	15.84	Կակաոյի, շոկոլադի և շաքար պարունակող հրուշակեղենի արտադրություն	
	15.85	Մակարոնեղենի արտադրություն	
	52.2 (բացառությամբ 52.26-ի)	Մասնագիտացված խանութներում սննդամթերքի, ներառյալ խմիչքները, մանրածախ առևտուր	
	51.3 (բացառությամբ 51.35-ի)	Սննդամթերքի, ներառյալ խմիչքները, մեծածախ առևտուր	
2.	15.2	Չկան, ձկնամթերքի վերամշակում և պահածոյացում	մինչև 2018 թվականի հունվարի 1-ը
	15.89.1	Ապուրների, արգանակների և ձվամթերքի արտադրություն	
	15.33.9	Ուրիշ խմբավորումներում չներառված մրգերի և բանջարեղենի վերամշակում և պահածոյացում	
	15.93	Գինու արտադրություն	
	15.94	Խնձորի և պտղահատապտղային այլ գինիների արտադրություն	
	15.96	Գարեջրի արտադրություն	
	15.97	Ածիկային գարեջրի արտադրություն	
	15.98	Հանքային արտադրատեսակների և ոչ ալկոհոլային խմիչքների արտադրություն	
	55.5	Կազմակերպություններին կից ճաշարանների	

		ծառայություններ և պատրաստի սննդի մատակարարում	
3.	15.88	Մանկական սննդի և դիետիկ սննդամթերքի արտադրություն	մինչև 2019 թվականի հունվարի 1-ը
	15.4	Բուսական և կենդանական յուղերի և ճարպերի արտադրություն	
	15.6	Ալրաղաց արդյունաբերության, ձավարեղենի, օսլայի և օսլա պարունակող մթերքի արտադրություն	
	15.92	Խմորման նյութերից էթիլային սպիրտի արտադրություն	
	74.82.1	Ծառայություններ՝ փաթեթավորման բնագավառում (խմիչքների և սննդամթերքի մասով)	
4.	15.95	Խմորման նյութերից այլ չթորած խմիչքների արտադրություն	մինչև 2020 թվականի հունվարի 1-ը
	15.33.1	Չրի արտադրություն	
	15.83	Շաքարի արտադրություն	
	15.86	Սուրճի և թեյի արտադրություն	
	15.87	Համեմունքների արտադրություն	
	15.89.2	Խմորիչների (դրոժի) արտադրություն	
	15.89.9	Ուրիշ խմբավորումներում չներառված այլ սննդամթերքի արտադրություն	
	15.91	Թորած ալկոհոլային խմիչքների արտադրություն	
	55.3	Ռեստորանների ծառայություն	
	55.4	Բարերի ծառայություն	
	74.82.2	Մսի և մսամթերքի կշռածրարում	
	74.82.3	Կարագի կշռածրարում	

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ